ՀՏԴ 81՝36

Հայոց լեզու

Կարինե ԱՄԻՐԽԱՆՅԱՆ
Լոռու մարզ, Թեղուտի հիմնական դպրոցի
հայոց լեզվի և գրականության ուսուցիչ
Էլ. փոստ՝ karine.amirkhanyan.63@mail.ru

ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌԻ ԵՐԿԱՐԺՈՒՅԹ ԲԱՅԵՐԻ ԿԱՊԱԿՑԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՆՁՆԱՆԻՇ ԳՈՅԱԿԱՆ ՈՒՂԻՂ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՀԵՏ

Հոդվածում քննվել են «բայ-գոյական» կապակցության մասնակի դրսևորումներից մեկի՝ «անձնանիշ գոյական ուղիղ խնդիր + ներգործական սեռի երկարժույթ բայ» կաղապարի որոշ յուրահատկություններ: Մասնավորապես, խոսքային միջավայրում որոշ դեպքերում առաջանում են կապակցման սահմանափակումներ՝ պայմանավորված բայի կազմությամբ, գոյականի ցույց տված անձի սեռով, տարիքային խմբով և այլն:

Բանալի բառեր՝ *անձնանիշ գոյական, երկարժույթ բայ, կապակցություն, ուղիղ խնդիր*

К. Амирханян

ВОЗМОЖНОСТИ СВЯЗИ ДВУВАЛЕНТНЫХ ГЛАГОЛОВ ДЕЙСТВИТЕЛЬНОГО ЗАЛОГА С СУЩЕСТВИТЕЛЬНЫМИ ОБОЗНАЧАЮЩИМИ «ПЕРСОНА» В РОЛИ ПРЯМОГО ДОПОЛНЕНИЯ

В статье рассматривается частичное явление синтаксической связи между глаголом и существительном в моделе «существительный в прямом дополнении обозначающий «персона» + двувалентный глагол действительного залога». В речевой деятельности в некоторых случаях происходят ограничения, которые связяны с структурой глагола, с семантическими особенностями существительного, в частности- это слова, обозначающие пол, возрастная группа человека .

Ключевые слова: *двувалентный глагол, действительный залог, прямое дополнение, существительное обозначающий «персона»*

K. Amirkhanyan

POSSIBILITIES OF RELATIONSHIP OF BIVALENT VERBS OF ACTUAL VERB WITH NOUNS DESIGNATING «PERSON» IN THE ROLE OF DIRECT OBJECT

The article deals with the partial phenomenon of the syntactic connection between a verb and a noun in the model «a noun in a direct object denoting «person» + a bivalent verb of the active voice». In speech activity, in some cases, restrictions occur that are associated with the structure of the verb, with the semantic features of the noun, in particular, these are words denoting gender, age group of a person.

Key words: bivalent verb, active voice, direct object, noun meaning "person"

Հայերենում խոսքի մասերն աչքի են ընկնում կապակցելիական հնարավորությունների տարբեր աստիճաններով: Բայը, լինելով խոսքակազմիչ գլխավոր միավոր, աչքի է ընկնում կապակցական հնարավորությունների բազմազան դրսևորումներով, ընդ որում՝ դրանում կարևորվում է կապակցվող միավորների ներքին իմաստային հնարավորությունների դաշտը, այն է՝ դասային պատկանելությունը:

Նախադասությունը ճիշտ կառուցելու տեսանկյունից էապես կարևորվում է բայերի և գոյականների կապակցական հնարավորությունների ուսումնասիրումը. ի վերջո, դրանք պայմանավորված են տվյալ ժողովրդի լեզվամտածողության առանձնահատկություններով: Հովի. Բարսեղյանը «Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն» գրքում նշում է, թե առարկայի ամեն մի գործողություն, շարժում տեղի է ունենում այլ առարկաների հետ նրա ունեցած փոխադարձ կապի ու ներգործության պայմաններում և արտացոլվում է մարդկանց լեզվամտածողության մեջ համապատասխան լեզվական ձևերով[1]:

Բայերի և գոյականների կապակցելիության հարցին առաջին անգամ անդրադարձ կատարել է Գ. Ջահուկյանը «Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները» աշխատության մեջ՝ «Բայերի կապակցելիական դասակարգումը» գլխում, որտեղ նշում է, որ *բայերի կապակցելիական դասակարգում* ասելով պետք է հասկանալ վերջիններիս դասակարգումը՝ ըստ նախադասությունը կազմող բառերի ու բառախմբերի հետ նրանց ունեցած կապակցելիության, որն ի վերջո հանգում է բայերի իմաստային դասակարգմանը՝ ըստ նրանց բաշխման տիպերի: Գիտնականն առանձնացնում է բայերի կապակցելիական դասակարգման երեք տիպ՝ դասանշային, արժութային և ընտրութային: Դասանշային դասակարգումը բայերի խմբավորումն է՝ ըստ ենթակայի դասային տարբեր խմբերի հետ կապակցվելու կամ չկապակցվելու, արժութային դասակարգումը դրանց

[1]*Տե՛ս **Բարսեղյան Հ.**, Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն, Երևան, 1953, էջ 119:*

խմբավորումն է՝ ըստ առարկայանիշ բառերի ու բառակապակցությունների (գոյականների ու գոյականական բառակապակցությունների, այսինքն՝ ենթակայի, գոյականական ստորոգելիի, խնդիրների և գոյականական պարագաների) հետ նրանց ունեցած կապակցելիության, իսկ ընտրութայինը խմբավորումն է՝ ըստ մակբայների հետ ունեցած կապակցելիության: Շեշտվում է, որ դասանշային, արժութային և ընտրութային դասակարգումները փոխկապակցված են, պայմանավորված մեկը մյուսով[1]: Հեղինակը նշում է. «....Բայական յուրաքանչյուր կարգի (տիպի) համար բերենք համապատասխան օրինակներ՝ ապագային թողնելով բայերի դասանշային հանգամանալից դասակարգումը»[2]: Մեզ հետաքրքրող հարցի մշակվածության տեսանկյունից հատկանշական է նաև Լ. Մաքսուդյանի դիտարկումը, ըստ որի՝ գործողության անուն բայանունների մեջ առկա բայիմաստը կամ որոշակի կապը այդ բայիմաստի հետ պայմանավորում է դրանց յուրահատուկ խնդրառությունը[3]:

Հաշվի առնելով բայերի կապակցական հնարավորությունների բազմազանությունը և հարցի ոչ լիարժեք մշակվածությունը՝ մենք որոշեցինք անդրադառնալ ներգործական սեռի բայերի կապակցական հնարավորություններին՝ մի նոր, չուսումնասիրված դիտակետից, այն է՝ քննել վերջիններիս կապակցելիությունը անձնանիշ գոյական ուղիղ խնդիրների հետ:

Անձնանիշ գոյական ուղիղ խնդիրների հետ կապակցվող բայերն աչքի են ընկնում կապակցելիության էական առանձնահատկություններով, ինչը պայմանավորված է և՛ բայասեռով (ներգործական սեռ), և՛ կազմությամբ, և՛ բայիմաստով:

Ընդհանուր առմամբ՝ նկատել ենք, որ բայերի՝ գոյական ուղիղ խնդիրների հետ կապակցելիության պայմաններում երբեմն պահանջվում է գործողությունը կրող օբյեկտների՝ մեկից ավելի քանակ (առնվազն երկու), օրինակ՝ *ամուսնալուծել* բայը: Անձնանիշ գոյականուղիղ խնդիրներին կապակցվող բայերի մեծ մասը կարող է կապակցվել ցանկացած անձնանիշ ուղիղ խնդրի հետ, սակայն դրանք իրենց ներքին համակարգում երբեմն կապակցելիության սահմանափակություններ են դրսևորում, որոնք կարող են պայմանավորված լինել տվյալ անձի սեռային պատկանելությամբ, տարիքային որոշակի խմբի պատկանելու հանգամանքով և այլն:

Բնականաբար, վերոհիշյալ բայերին լրացնող ուղիղ խնդիրները պատասխանում են միայն *ո՞ւմ* հարցին և սովորաբար ձևավորվում են տրական հոլովով (հատկապես՝ որոշյալ առման դեպքում), թեև երբեմն (անորոշ առմամբ գործածվելիս) ուղիղ խնդիրը կարող է հանդիպել ուղղական հոլովով, օրինակ՝

---

[1] *Տե՛ս* ***Ջահուկյան Գ.****, Ժամանակակից հայոց լեզվի տեսության հիմունքներ, Երևան, 1974, էջ 461-487:*

[2] *Նույն տեղում:*

[3] *Տե՛ս* ***Մաքսուդյան Լ.****, Բայանուն գոյականը ժամանակակից հայերենում, Երևան, 1983, էջ 63:*

Եթե աղջիկ էին ամուսնացնում, նորահարսին վարդ թաշկինակ ընծայելն անհրաժեշտ էր (ԱԲ):

Միայն անձնանիշ գոյականուղիղ խնդիրներին կապակցվող բայերը փորձել ենք իմաստային խմբավորումների ենթարկել, որոնցից կարելի է առանձնացնել.

1. Ամուսնական հարաբերություններին առնչակից հատկանիշներն արտացոլող բայեր, ինչպես՝ *ամուսնացնել, ամուսնալուծել, ապահարզանել,այրիացնել,զուգավորել* (*ամուսնացնել*)և այլն, օրինակ՝ *Բարեգործությունը նրա համար կենսաձև դարձավ տասներկու տարի առաջ, երբ Նահանգներում ամուսնացնում էր միջնեկ որդուն* (Մամուլ), *Արգելես այն կոտորածը, որ կանայք ու հարսունք պիտի այրիացնե* (Մ): Նշված բայերից առաջին երեքի և նման այլ բայերի ցույց տված գործողության կրողները սովորաբար երկուսն են, թեև դրանցից մեկը կարող է պասիվ կրողի դերում լինել: Այս հանգամանքը կարող է պայմանավորված լինել բայի կազմությամբ. օրինակ՝ *ամուսնացնել, ամուսնալուծել* բայերի *ամուսին* բաղադրիչը՝ *ամուսնություն* իմաստով, երկուստեք կրող օբյեկտի գաղափար է արտահայտում, որոնցից մեկը կարող է անուղղակի խնդրի դերով հանդես գալ, իսկ *ապահարզանել*-ը պայմանավորված է *հարսն* արմատի՝ հնչյունափոխության ենթարկված *հարզան* բաղադրիչով:

Սրանցից *զուգավորել* բայը՝ *սեռական հարաբերություններ կատարել* իմաստով, առավելապես կենդանանիշ գոյական ուղիղ խնդիր է պահանջում, օրինակ՝ *Սերունդ ստանալու համար զուգավորում են տարբեր ցեղերի կենդանիների* (ՀՍՀ), ուստի կապակցելիությունը քննելիս կարևորվում է այն համատեքստը, որտեղ հանդես է գալիս տվյալ բայը:

Բառարանում *դավաճանել* բայը՝ *ամուսնական հավատարմությունը խախտել* իմաստով, դիտվել է իբրև չեզոք բայ, մինչդեռ մենք գտնում ենք, որ վերոհիշյալ իմաստով գործածվելիս այն պիտի դիտել ներգործական սեռի բայերի շարքում, օրինակ՝ *Նա դեռ հավատարիմ էր իր մարդուն, մի ամուսնու, որ ամեն քայլում դավաճանում էր նրան* (Ծ):

Հիշյալ բայերից *այրիացնել*-ը կապակցելության սահմանափակություն է դրսևորում, ընդ որում՝ թե՛ սեռով պայմանավորված, թե՛ տարիքով, քանի որ սույն բային լրացնող ուղիղ խնդրի դերում պարտադիր ենթադրվում է իգական սեռի ներկայացուցիչ, սովորաբար՝ հասուն տարիքի անձ:

2. Անձի ապրումի, զգացումի, հոգեվիճակի կամ հուզազգայական դաշտի փոփոխություն ցույց տվող բայեր, ինչպես՝ *ամաչեցնել, անասնացնել, ապուշացնել, անգթացնել, բարոյականացնել, անբարոյականացնել, անզգամացնել, զզվեցնել, արիացնել, գոտեպնդել, բարկացնել, զազանեցնել,ապշեցնել, զարմացնել, լացացնել, ծիծաղեցնել, խնդացնել* և այլն, օրինակ՝ *Դա Խանդութին օգնող ու յուրայիններին ամաչեցնող...գեղջկուհին էր* (ԴԴ), *Ինքներդ եք ձեզ անասնացնում ու ծաղրելի դարձնում* (Ա), *Գիշերային մի*

ճանճ բզզալով իջնում էր մասրենու տերևներին, հետո ցատկում Մանուշի մազերի վրա ու իր տզզոցով բարկացնում նրան (ՍԽ), *Այս այն դևն է, որ...մտնում է մարդու արյունը, վառում, բորբոքում, գազանեցնում է նրան* (Ն):

3. Անձի կամ անձանց միացում, միավորում ցույց տվող բայեր, ինչպես՝ *ախպերացնել*(բրբ.), *եղբայրացնել, անդամագրել, անդամակցել («անդամակից դարձնել»,բարեկամացնել* և այլն, օրինակ՝ *Չնայելով, որ նրանք երկու միմյանց հակառակ ազգությունների էին պատկանում, բայց գիտության գաղափարը եղբայրացրել էր նրանց* (Ր), *Միքայելն ու Եղիշեն սովորելու մեկնելուց առաջ բարեկամացրին իրենց կանանց* (ՎԽ):

4. Անձի նկատմամբ բարոյական կամ ֆիզիկական ճնշում, հալածանք, հարված ցույց տվող բայեր, ինչպես՝ *աղախնացնել, անիրավել* (*անիրավությամբ զրկել*), *առևանգել, բռնաբարել, բռնավարել, արտաքսել, աքսորել, գաղթեցնել, անդամալուծել, անդամախեղել, գնդակել, գնդակահարել, ապտակել* և այլն, օրինակ՝ «*Անիրավեցինք շինականին, կեղեքեցինք*»(ԴԴ), «[*Գրիբոյեդովը նրանց*]*փրկել էր պարսկական գերությունից՝ Պարսկաստանից գաղթեցնելով Արարատյան դաշտավայրը*»(ՀՔ), *Մեզանից ոչ ոք չէր տեսել քեռի Եգորին, որին տարիներ առաջ աքսորել էին*»(ԱԲ),«*Հարվածը սաստիկ էր, և կարող էր միանգամից անդամալուծել ողորմելի ծերունուն* (Ր), *Թույլ չտալով հակառակորդին սթափվելու, բոլոր ուժով ապտակեց նրան* (Շ):

5. Ռազմական ոլորտին վերաբերող բայեր, ինչպես՝ *ապազինել* (*զինաթափ անել*), *ասպազինել* (*ասպազեն հագցնել*), *ասպարավորել, զինաթափել, զինակոչել, զորակոչել, զրահավորել* (*մեկին զրահ հագցնել*)և այլն, օրինակ՝ *1914թ., երբ Հովհաննեսին զորակոչեցին, Տիգրանը նորածին էր* (ՀՔ):

6. Պաշտոն, կոչում, աստիճան ստանալուն կամ դրանից զրկվելուն վերաբերող բայեր, ինչպես՝ *եպիսկոպոսացնել, քահանայացնել, գահազրկել, թագադրել, թագազերծել, թագազրկել, թագաժառանգել, թագակապել, իշխանազրկել, իշխանացնել, աստիճանավորել* (*աստիճան շնորհել*), *աստիճանազրկել* և այլն, օրինակ՝ *Պարթևաց Խոսրով Առաջին թագավորը 113-ին Ա-ին գահազրկում է և փոխարենը նշանակում նրա եղբայր Պարթամասիրին* (ՀՍՀ):

Այս բայերի մեծ մասը, հատկապես՝ *զրկել* բաղադրիչով կազմավորված բայերը, կապակցելիության ակնհայտ սահմանափակությամբ են օժտված, քանի որ պահանջում են որոշակի պաշտոնի, աստիճանի առկայություն տվյալ անձի մոտ, ընդ որում՝ վերոհիշյալ օրինակներից առաջին երկուսը, բացի այն, որ բնութագրվում են սեռային սահմանափակությամբ(ակնհայտ է, որ եպիսկոպոսի կամ քահանայի աստիճան ստանալուն կարող են հավակնել միայն արական սեռի ներկայացուցիչները), պահանջում են նաև, որ ուղիղ խնդիրը *որոշակի աստիճանի, կոչման հասած անձ նշանակող բառ լինի*, քանի որ արական սեռի ոչ բոլոր ներկայացուցիչները կարող են հավակնել քահանայության կամ եպիսկոպոսության:

7. Անձի ազգային էության փոփոխություն ցույց տվող բայեր, ինչպես՝ *թյուրքացնել, թուրքացնել* (*մահմեդական կրոնը ընդունել տալով՝ այլազգի անձի թուրք դարձնել*), *ռուսացնել, լատինացնել* (1. *ուրիշ ցեղեր ձուլել՝ լատին դարձնել*, 2. *կաթոլիկ դարձնել*), օրինակ՝ *Աղջիկներիդ կտանեմ կթուրքացնեմ* (Ր):

Վերը բերված բայերն այլ իմաստներով գործածվելիս կարող են կապակցվել մյուս դասերի ուղիղ խնդիրների հետ, օրինակ՝ *լատինացնել* բայը՝ *գրերը լատինականգրերով փոխել* իմաստով, կապակցվում է իրանիշ թանձրացական ուղիղ խնդրի հետ, օրինակ՝ *Թուրքերն իրենց արաբական այբուբենը լատինացրին*, մինչդեռ *լատիներենի ու լատինական մշակույթի ազդեցությանը ենթարկել* իմաստով գործածվելիս վերոհիշյալ բայը կարող է կապակցվել նաև իրանիշ վերացական ուղիղ խնդրի հետ, օրինակ՝ *Եվրոպայի այդ մասում ժողովուրդների մի մասը լատինացրել էր իր սովորույթները* (Մամուլ):

8. Մանկահասակ անձանց վերաբերող գործողություն ցույց տվող բայեր, ինչպես՝ *բարուրել, խանձարուրել, դիել* (*կուրծք տալ*), *կերակրել* (*կուրծք տալ*), *դաստիարակել* (*երեխաներին կիրթ դարձնել*), *զռացնել, զռզռացնել* (*երեխային շատ լացացնել*), օրինակ՝ *Մինչև այդ օրը Սահրատի եղբոր կինն էր Սուսամբարին յուր զավակի հետ երբեմնապես դիել, պահպանել* (ՊՊ), *Այդ ժամանակ դիրեկտորն զգաց, որ սխալվել է, որ սպառնալիքը երբեք մարդ չի դաստիարակել, ու հիշեց, որ մանկատանը վարիչ եղած ժամանակ այդ մեթոդով չէր դաստիարակում անկարգ տղաներին* (ՍԶ):Թվարկված բայերի մեջ *բարուրել*-ը, *խանձարուրել*-ը,*դիել*-ը և *կերակրել*-ը իրենց հերթին կապակցելիական որոշակի սահմանափակություն են ապահովում՝ պայմանավորված բայիմաստով, քանի որ ենթադրում են նորածին անձ մատնանշող ուղիղ խնդրի հետ կապակցելիություն:

Վերոհիշյալ բայերն այլ իմաստներով գործածվելիս կապակցելիության սահմաններն ընդլայնում են՝ կապակցվելով այլ դասերի ուղիղ խնդիրների հետ. օրինակ՝ *զռզռացնել* բայը՝ *էշին շատ անգամ զռացնել* իմաստով, կապակցվում է կենդանանիշ ուղիղ խնդիրներին, նույն կերպ՝ *զռացնել*-ը՝ «*այնպես անել, որ էշը զռա*»իմաստով: *Դաստիարակել*-ը՝ *մշտական ներգործման միջոցով ազդել անհատի մտքի, կամքի, զգացումների, գեղարվեստական ճաշակի վրա* իմաստով, կարող է կապակցվել իրանիշ վերացական ուղիղ խնդրի հետ, օրինակ՝ *Ասպատակություններ, որ պատանու մեջ միայն համարձակություն ու արագաձեռնություն են դաստիարակում* (ՍԹ):*Կերակրել* բայը՝ «1. *կերակուր՝ կեր տալ*, 2. *խնամել*, 3. *սնունդ հայթայթել*» իմաստներով կարող է կապակցվել տարբեր դասերի գոյական-ուղիղ խնդիրների հետ, օրինակ՝ *Ինչո՞ւ պատճառ դառնալ ընտանիքների դժբախտության, զրկել նրանց կերակրող ձեռքերից* (Մ):

Իհարկե, այսօրինակ բայերը անձի առմամբ գործածված այլ դասերի գոյական ուղիղ խնդիրների հետ ևս կարող են կապակցվել, օրինակ՝ *ավանսավորել*

(*ավանս տալ*) *ժողովրդին*, սակայն դա մեր խնդրո առարկայից դուրս է և չի նպաստում մեր քննության խնդիրների բացահայտմանը:

Անձնանիշ ուղիղ խնդիրների հետ կապակցական հնարավորություններով օժտված բայերը հայերենում ամենից տարածվածն են: Դրանց մեջ գերակշռում են պատճառական ածանց ունեցող բայերը, ինչը, թերևս, պայմանավորված է դրանցով արտահայտված գործողության՝ միջնորդավորված լինելու հանգամանքով:

Անձնանիշ սեռի խնդրառու բայերը մի դեպքում կապակցվում են անձնանիշ բոլոր ուղիղ խնդիրներին, իսկ մյուս դեպքում կապակցելիության սահմանափակություններ են դրսևորում, որոնք պայմանավորված են անձի սեռով, տարիքային խմբով և այլն: Երբեմն էլ կապակցական հնարավորությունների սահմանափակությունը կարող է պայմանավորված լինել բայի կազմությամբ կամ իմաստով, ինչպես նաև խոսքային միջավայրով:

Կարևորվում է այն համատեքստը, որում հանդես է գալիս տվյալ բայը. եթե մի իմաստով գործածվելիս կապակցվում է միայն անձնանիշ գոյականուղիղ խնդրի հետ, ապա մեկ այլ իմաստ արտահայտելիս կարող է կապակցվել նաև այլ դասերի գոյական ուղիղ խնդիրների հետ:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, բ.գ.թ. Հ.Ս.Ղազարյանը: